Известия НАН РА, Науки о Земле, 1999, LII, *№2-3, 123-124*

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԱԳՅԱՆ

1999թ. հուլիսի 21-ին, 85 տարեկան հասակում վախճանվեց հանրապետության երկրաբանական ծառայության ճանաչված մասնագետներից մեկը, Հայաստանի վաստակավոր երկրաբան Լևոն Ավետիսի Ավագյանը:

Լ.Ա.Ավագյանը ծնվել է 1914թ. սեպտեմբերի 9-ին, Իգդիր գյուղում (Թուրքիա), ուսուցչի ընտանիքում:

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին, փրկվելով թուրքական յաթաղանից, Ավագյանների ընտանիքը, թողնելով հարազատ բնակավայրը, տեղափոխվում է Երևան, որտեղ էլ Լ.Ա.Ավագյանն ապրում և ստեղծագործում է մինչև իր կյանքի վերջը:

1934թ. Լ.Ա.Ավագյանը ընդունվում է Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը, որը հաջողությամբ ավարտում է 1939թ.: Համալսարանում նա ֆունդամենտալ գիտելիքներ է ստացել ժամանակի առաջավոր պրոֆեսորների՝ Տ.Ջրբաշյանի, Պ.Ղամբարյանի, Հ.Կարապետյանի, Ստ.Լիսիցիանի և այլոց մոտ: Համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի է ընդունվում ԳԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում, որտեղ աշխատում է մինչև 1942թ.: Լ.Ա.Ավագյանը 1942թ. զորակոչվում է զինծառայության: 1943թ. զորացրվում է և կրկին աշխատանքի է անցնում նույն ինստիտուտում որպես գիտական աշխատող, ապա երկար տարիներ ղեկավարել է նաև Երկրաբանական գիտությունների ինստիտուտի թանգարանը:

Այդ տարիներին Ավագյանը զբաղվում է Հայաստանի չորրորդական դարաշրջանի ապարների շերտագրության հարցերով և նրանցում գտնվող բրածո կենդանիների ուսումնասիրությամբ: Հատկապես արժանի է հիշատակման Գյումրիի «Կազաչի պոստ» տեղամասում հայտնաբերված Տրոգոնտերիալ փղի մնացորդների ուսումնասիրությունը, որը 1948թ. հանդիսացավ նրա թեկնածուական դիսերտացիայի հիմնական թեման: Աշխատանքի արդյունքներն ամփոփվեցին մենագրությունում, որը լույս տեսավ 1949թ.:

Պետք է նշել, որ Տրոգոնտերիալ փղի ոսկորների մնացորդները հետագայում Լ.Ա.Ավագյանի և քանդակագործ Հ.Պողոսյանի համատեղ ջանքերով վերականգնվեցին և ներկայումս այդ կմախքը, որը լավագույններից մեկն է աշխարհում, ցուցադրված է Երևանում, երկրաբանական գիտությունների ինստիտուտի թանգարանի սրահներից մեկում:

Ավելի քան երկու տասնամյակ Լ.Ա.Ավագյանը նվիրվել էր շատ կարևոր և շնորհալի մի գործի՝ Հայաստանի երկրաբանական գիտության և ծառայության պատմության հարցերի ուսումնասիրմանը: Նրա գրչին են պատկանում մի շարք աշխատանքներ, նվիրված հայ անվանի երկրաբաններ Հ.Կարապետյանի, Պ.Ղամբարյանի, Հ.Ստեփանյանի, Կ.Մկրտչյանի, ինչպես նաև Ա.Դեմյոխինի, Պ.Բոնների կյանքին և գործունեությանը: Նա տպագրության էր պատրաստել նաև ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետի և

ՀՀ ԳԱԱ ԵԳԻ պատմությունը ներկայացնող աշխատությունները, որոնք, ցավոք, մնացին անտիպ:

Բացի գիտական գործունեությունից Լ.Ա.Ավագյանը երկար տարիներ փայլուն-կերպով դասավանդել է հնէաբանություն առարկան Երևանի Պետական Համալսարանում և Պոլիտեխնիկական ինստիտուտում: Նա նաև Հայաստանի «Գիտելիք» ընկերության ամենահարգված և սիրված դասախոսներից մեկն էր և գեղեցիկ ու մատչելի հայերենով ունկնդիրների լայն շրջաններին էր մատուցում Հայաստանի երկրաբանության ու օգտակար հանածոներին վերաբերվող գիտական տեղեկությունները:

Լևոն Ավագյանի մահը մեծ կորուստ էր Հայաստանի երկրաբանական ծառայության համար:

Մի խումբ ընկերներ – աշխատակիցներ